

«Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին»

Դեկտեմբերի 6-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում տեղի ունեցավ պատմաբան, հասարակական-քաղաքաքան գործիչ, վիճակագիր Հովհաննես Տեր Մարտիրոսյանի (Ա-Դո) **«Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին»** գրքի անգլերեն թարգմանության ներկայացումը:

Գիրքը ներկայացրեց Լոնդոնի «Կոմիտաս» հիմնարկի տնօրեն, պատմաբան Արա Սարաֆյանը:

Բացման խոսքով հանդես եկավ «Արևելք» էլեկտրոնային թերթի գլխավոր խմբագիր Սազո Արեանը:

Հեղինակը գիրքը կարևորում է նրանով, որ մինչ այս պատմագիտական աղբյուրներում Վանի 1915թ. դեպքերի մասին անգլերեն տարբերակների շարքում նորություն է:

Գրքում հակիրճ պատմական ակնարկից հետո ներկայացրել է Վանի նահանգի պատմությունը, 1908 թվականի երիտթուրքերի՝ իշխանության գալու ընթացքը, ներկայացվում են դրան հաջորդող իրադարձությունները մինչև Առաջին աշխարհամարտի սկսվելը և երիտթուրքերի քաղաքական դիրքորոշումը հայերի նկատմամբ, ինչպես նաև հայ տղամարդկանց զորակոչումը, հետո զինաթափումն ու զանգվածային կոտորածները: Հեղինակը մանրամասն ներկայացրել է նահանգի գաղթը, ջարդերի առաջին փուլը, որից հետո ըստ բնակավայրերի ներկայացնում է հայերի ցուցաբերած դիմադրությունը, դրան նախորդող և հաջորդող դեպքերը: Դեպքերը ներկայացվել են Արճակում, Հայոց Ձորում, Թիմարում: Առանձին գլխում անդրադարձ է կատարվել Վանի հերոսամարտին, նրա առաջնորդներին, կազմակերպչական աշխատանքները, ժողովրդի մեջ տիրող տրամադրություններին: Հեղինակն անդրադարձել է Հայ ազգային ինքնապաշտպանական մարմնի գործունեությանը և դրան զուգահեռ ներկայացրել Ջևդետ փաշայի գործողությունները՝ հայերին հնազանդեցնելու և Այգեստանն ու Քաղաքը հիմնահատակ ավերելու վերաբերյալ: Գիրքն ավարտվում է Վասպուրականի ողջ նահանգի զանգվածային

գաղթի տեսարաններով, երբ տեղի հայ բնակչությունը բռնի, հոծ շարքերով լքում էր
հայրենի բնակավայրը:
